

ՀՐԱԶՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
ԴԻԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐՃԱՀԱՍԱԿ  
ՀԱՅՐԻԿԻ  
ՀԵՔԻԱԹՆԵՐԸ



Երևան  
Հեղինակային հրատարակություն  
2025

## ԿԱՐՃԱՀԱՍԱԿ ՀԱՅՐԻԿԸ

**Դ**ասարանի երեխաներին հարցրին, թե ով է իրենց համար հեքիաթ կարդում: Քսանինը երեխա ասաց՝ մայրիկը, ու միայն Միշան ասաց, որ իր համար ամեն օր հեքիաթ է կարդում հայրիկը:


Միշան ու հայրն ընկերներ էին այն օրվանից, երբ հայրը երազում տեսավ, որ Միշան մեծացել է: Առավոտյան նա գրկեց Միշային ու ասաց. «Դու իմ ամենալավ ընկերն ես»:

Բայց Միշան գիտեր, որ մեծերն ու փոքրերը չեն կարող ընկերներ լինել. մեծը մեծի հետ է ընկերություն անում, փոքրը՝ փոքրի: Փոքրերը սիրում են խաղալ, իսկ մեծերը՝ աշխատել, երբեմն էլ՝ բարկանալ: Բացի այդ, ո՞նց նրանք կարող են ընկերներ լինել, եթե տարբեր հասակի են:

- Բայց դու ինձնից բոյով ես,- այդ օրն ասաց Միշան հայրիկին:

Գիտե՞ք՝ ինչ արեց հայրիկը: Իջավ ծնկների վրա ու դարձավ Միշայի հասակին: Այդ պահին Միշան հասկացավ, որ իրենք կարող են ընկերներ լինել:





## ԸՆԿԵՐՆԵՐԸ

**Ե**րբ Միշան ու հայրն ընկերացան, հայրը նրան խոստացավ, որ ընկերոջ պես կվերաբերվի:

- Այսինքն՝ ինձ վրա չե՞ս բարկանա,- հարցրեց Միշան:

- Եթե բարկանամ, դու էլ ինձ վրա բարկացիր, ինչպես ընկերները:

- Եթե սխալ բան անեմ, չե՞ս գոռա:

- Իսկ դու ինձ վրա գոռո՞ւմ ես:

- Չէ... դու մեծ ես:

- Հիմա մենք ընկերներ ենք, ուրեմն դու էլ ես մեծ:

Միշան նայեց հոր աչքերին: Դրանց մեջ նա տեսավ, որ ինքն արդեն մեծ է:



## ՄՐԻՆԳԻ ԴԱՍԸ

**Մ**ի օր Միշան անտրամադիր եկավ տուն:

- Ի՞նչ է եղել,- հարցրեց հայրը:
- Դպրոցում ձեռ են առնում, որ սրինգ նվագել չգիտեմ:
- Ո՞վ է ձեռ առնում:
- Մեր դասարանից չորս հոգի. իրենք լավ են նվագում ու բոլորիս ձեռ են առնում:
- Բայց նոր եք սկսել նվագել, չէ՞, դեռ պետք է սովորես:
- Չեմ կարող իրենց պես,- տխուր ասաց Միշան:
- Իզուր ես այդպես մտածում,- ասաց հայրը՝ նստելով Միշայի կողքը,- սկզբում միշտ էլ դժվար է: Հիշո՞ւմ ես մաթեմատիկան:

Երբ Միշան դպրոցում նոր էր սկսել մաթեմատիկա անցնել, ընկճվում էր, որ լավ չի ստացվում: Բայց հետո հասկացավ թվերն ու սիրեց: Դասընկերները չէին վերջացրել տասի բազմապատկման աղյուսակը, իսկ նա մտքում երկնիչ թվեր էր բազմապատկում:

- Ուրիշների ասածներից մի՛ նեղվիր,- շարունակեց հայրը,- գնալով ավելի լավ կնվագես: Ոչ ոք չուրիշում է ընդունակությունները չգիտի, չէ՞: Կուզե՞ս այսօր պատմեմ մի աղջկա մասին, որին ընկերները նեղացրել էին, քանի որ դանդաղ էր վագում:

Միշան գլխով արեց: Երեկոյան հայրը նրան պատմեց Արագավազ Իզայի հեքիաթը:



## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարճահասակ հայրիկը .....	2
Ընկերները .....	4
Սրինգի դասը .....	5
Արագավազ Իզան .....	6
Դատախազը .....	16
Զոր գլուխը .....	18
Մարդն առյուծից խելոք է .....	24
Վարագույր ուտող հրեշը .....	26
Միշան անցնում է փողոցը .....	32
Սև ակնոցով կրակը .....	34
Հաջորդ կայարանը՝ Մարս .....	42
Արքայախնձոր Փուշին .....	44
Հայրիկի գաղտնիքները .....	50
Կարմիր ընկուզենին .....	52
Կապույտ ավտոբուսը .....	60

